

Խէրիկ, վեր իլի, Խէրիկ, վեր իլի,
Ախշըքի իրիսին բէբար իմ մնացի»:
Խօր գերըզմէն ձէն էկաւ, էսաց,
«Թափի մազն ի մուրուսէս,
Անացի մջախն ի ձեռնէս»:

Էսաց.

«Խէրիկ, վեր իլի, Խէրիկ, վեր իլի,
Քիւ անիւշ խուտուն փափաք մնացը,
Քիւ անիւշ խօսքերուդ կարօտ մնացը,
Էնքան մընակ ախշար կացը»:

Էսաց.

«Ահնա՛ Հալարայ քեաղաք,
Քիւ խաց թխուկ ը,
Քիւ էմագ¹⁾ իրուկ ը»:

Էսաց.

«Հալարայ քեաղաք փայ չ'ունիմ,
Իմ բար ու փայ ծօխիր իմ,
Իմ խուսք ու խարար տուիր իմ,
Հալարայ քեաղաք չիմ էրթայ»:

Ահնաց վեար մօր գերըզմէին, էսաց.

«Մէրիկ, վեր իլի, մէրիկ, վեր իլի,
Իս իմ քիւ ծծի որտին,
Եօթ ափս ընձը շախիր իս վեար քիւ սրտին,
Շատ տանջանք իս քեշի վեար աստանուորին.
Շատ ման իմ էկի ախշար, շեւար իմ ման էկի,
Չ'տեսայ քիւ պէս քեաղցրիկ մէրիկ վեար ախշօրին»:

Հանգամանքը. Չէնով-Յեովանի կինը կամենում է խօսք մէկ անել Մհերի հետ, Մհեր չի համաձայնուում, ուստի և զրպարտուում է հօրեղբօր առաջ: Չէնով-Յեովանը հաւատալով իւր կնոջ զրպարտութիւններին՝ Մհերին տանից դուրս է անում:

¹⁾ Աերակուր: